ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2014թ. գործունեության միջոցառումների և գերակա խնդիրների մասին

2013 թվականին տնտեսավարողների ջանքերի և վարվող պետական քաղաքականության արդյունքում գյուղատնտեսության ոլորտում գրանցվել են էական դրական տեղաշարժեր:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 918.6 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.1 %-ով: Ընդ որում աճ է գրանցվել ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության ճյուղերում: Նշված աճն ապահովվել է ինչպես էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ գործոնների հաշվին:

Գյուղատնտեսության ոլորտում առկա են որոշակի այլ ձեռքբերումներ, որոնցից առանձնանում են հետևյալները՝

- **<u>Գյուղատնտեսական հողերի արդյունավետ օգտագործում</u>**: Առանձնակի կարևորվում է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը: 2011-2013 թվականներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 35.0 հազ. հա-ով, այդ թվում միայն 2013 թվականին՝ 14.0 հազ. հա: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2013 թվականին կազմել է 71.0 %, 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: 2013 թվականին աշնանացանի տարածքները ավելի քան 5.0 հազ. հա-ով գերազանցել են նախորդ տարվա մակարդակը:
- **<u>Սերմնաբուծություն և սերմապահովություն</u>**: Սերմնաբուծության և սերմապահովության ուղղությամբ իրականացված պետական ծրագրերի արդյունքում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալների աննախադեպ ավելացումը: Ընդ որում, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալները գերազանցում են նախորդ տարվա մակարդակը շուրջ 20 %-ով (կազմելով 547.1 հազ. տոննա), այդ թվում ցորենինը՝

ավելի քան 26 %-ով (կազմելով 306.6): Օպերատիվ տվյալներով ցորենի միջին բերքատվությունը կազմում է 30.8 ց/հա, նախորդ տարվա 26.0 ց/հա-ի դիմաց: Ցորենի ինքնաբավության մակարդակը վերջին 5 տարիների միջին տվյալներով կազմել է 35.2 %: Ցորենի ծավալների նման աճը հնարավորություն կտա ինքնաբավության մակարդակը 2013 թվականին այդ ցուցանիշի նկատմամբ ավելացնել 5-6 տոկոսային կետով: Կարևոր է համարվում նաև գրեթե բոլոր բուսաբուծական մթերքների ծավալների ավելացումը:

- **<u>Անասնագլխաքանակի և անասնապահական մթերքների արտադրության աճ</u>**: Վերջին ժամանակահատվածում անասնագլխաքանակի աճի միտումները և անասնապահության ոլորտում իրականացված ծրագրերը նախադրյալ հանդիսացան անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության ծավալների ավելացման համար: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ, տավարի գլխաքանակն ավելացել է 10.3 %-ով (661.0 հազ. գլուխ), այդ թվում կովերինը՝ 7.0 %-ով (303.3 հազ. գլուխ), մանր եղջերավորների գլխաքանակի աճը կազմել է 14.3 % (674.7 հազ. գլուխ): Առավել մեծ աճ գրանցվել է խոզերի գլխաքանակի համար, որը կազմել է 34.2 % (145.0 հազ. գլուխ): Ըստ գնահատման, անասնապահական մթերքների համախառն արտադրությունը գերազանցում է 2012 թվականի մակարդակն գրեթե 8.0 %-ով նախորդ տարվա 3.2 %-ի դիմաց:
- **<u>Գյուղատնտեսական մթերքների արտահանման ծավալների էական ավելացում</u>**: Գյուղատնտեսությունում տնտեսական աճի հետ մեկտեղ արտահանման կառուցվածքում ավելացել է գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը: 2013 թվականին հանրապետությունից արտահանվել է շուրջ 64.5 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 2.1 անգամ: Ծիրանի արտահանումը կազմել է 23.3 հազ. տոննա, նախորդ տարվա 12.6 հազ. տոննայի դիմաց: Աննախադեպ էին

կարտոֆիլի արտահանման ծավալները, այն կազմեց 24.0 հազ. տոննա, նախորդ տարվա 1137.4 տոննայի դիմաց:

- **<u>Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում</u>**: ՀՀ կառավարության կողմից հաստատված **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին»** համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 54.7 մլրդ դրամի 63.0 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 1.5 մլրդ դրամ:
- **2013 թվականին իրականացվել են նաև պետական աջակցության մի շարք այլ ծրագրեր, որոնցից գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման, ինչպես նաև դիզելային վառելանյութի և հանքային պարարտանյութերի մատչելի գներով մատակարարման ծրագրերը իրականցվում են սկսած 2011 թվականից և շարունակվելու են նաև 2014թվականին:**

Գյուղատնտեսությունում ծառացած խնդիրների և առաջնահերթությունների գնահատման արդյունքում ձևավորվել են 2014 թվականին նախարարության գործունեության միջոցառումները և գերակա խնդիրները, որոնք բխում են ոլորտի համար ուղենիշային համարվող ՀՀ կառավարության ծրագրից և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունից:

Առաջնահերթ միջոցառումներից է լինելու՝

«Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության 2014-2025 թվականների կայուն զարգացման ռազմավարության նախագծի մշակումը և ընդունումը:

Ծառացած խնդիրներից և իրավաճակային փոփոխություններից ելնելով կվերանայվի գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը, նոր ռազմավարության դրույթները կհամապատասխանեցվեն Հայաստանի Հանրապետության 2013-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարության ծրագրի դրույթներին: Ռազմավարությամբ կսահմանվեն գյուղատնտեսության զարգացման տեսլականը, ռազմավարության նպատակը և հիմնական խնդիրները և այդ խնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Ռազմավարությամբ կսահմանվեն գյուղատնտեսական ոլորտի հիմնական կանխատեսումային ցուցանիշները և ռազմավարության իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը: Փաստաթուղթը ուղենիշային կլինի գյուղատնտեսությունում համակարգված քաղաքականության իրականացման համար:

2014թ. համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության համար սահմանված գերակա խնդիրներից կարևորվում է՝

Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության՝ գյուղատնտեսության ոլորտին առնչվող միջոցառումների իրականացումը, որի նպատակը՝ ՀՀ Մաքսային Միությանը անդամակցությամբ պայմանավորված գյուղատնտեսության ոլորտի մրցունակության պահպանումն ու բարձրացումն է, ինչպես նաև տեղական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանությունն է:

Կարևորագույն գերակա խնդիր է մնում՝

Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը:

Գերակա խնդրի նպատակը՝ հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի առավել արդյունավետ օգտագործման, տնտեսավարման ձևերի կատարելագործման միջոցով առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների արտադրության ծավալների ավելացումն ու արդյունավետության, ինչպես նաև ինքնաբավության մակարդակի բարձրացումն է:

Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների համաձայն, էներգետիկ արժեքով հաշվարկված, կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը, վերջին տարիների տվյալներով, կազմում է գրեթե 60 %: Հանրապետությունում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվել կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի և հատապտղի, խաղողի, մանր եղջերավորների մսի ուղղությամբ, միջինից բարձր ինքնաբավության մակարդակ գոյություն ունի կաթի-կաթնամթերքի և խոշոր եղջերավորների մսի համար: Ինչ վերաբերում է ցորենին, եգիպտացորենին, հատիկաընդեղեն մշակաբույսերին, թռչնի և խոզի մսին, ապա ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր:

Առաջիկա քաղաքականությունն պետք է նպատակաուղղվի նշված մթերքների մրցունակության բարձրացմանը, արտադրության ծավալների ավելացմանը և արդյունքում տեղական արտադրությամբ ներմուծման փոխարինմանն ու ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Խնդիր է դրվում առաջնահերթ մինչև 2020 թվականը անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության մակարդակը, էներգետիկ արժեքով գնահատված, հասցնել շուրջ 80.0 %-ի, իսկ ցորենի ինքնաբավությունը՝ 60.0 %-ի:

2014 թվականի գերակա խնդիրներից է նաև՝

Անասնապահության մասնագիտացում ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցության շարունակումը:

Գերակա խնդրի նպատակը՝ ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման միջոցառումների՝ հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման, կոոպերատիվների կարողությունների ուժեղացման, անասնաբուժական սպասարկման կենտրոնների հիմնման, դաշտային կերարտադրության զարգացման, տոհմային և անասնաբուժական աշխատանքների բարելավման միջոցով բարձր լեռնային և սահմանամերձ անասնապահական մասնագիտացում ունեցող գյուղական համայնքներին աջակցությունն է:

Նշված գերակա խնդրի ուղղությամբ 2011-2013թթ. զգալի աշխատանքներ են իրականցվել:

ՀՀ 6 մարզերի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքների փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 12 համայնքներում: Մասնավորապես, 67 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ: 47 համայնքում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները (114 կմ ջրագիծ, 150 հատ խմոց), 48 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 324 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 45 կոոպերատիվի տրամադրվել է 66 անիվավոր տրակտոր:

<u>Առաջիկա խնդիրներ:</u> Գյուղատնտեսության ոլորտում ձեռքբերումների և իրականացված աշխատանքների հետ մեկտեղ շատ են նաև իրականացվելիք խնդիրները: Մասնավորապես, 2014 թվականին քաղաքականությունն ուղղվելու է հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը.

- **<u>Հողերի արդյունավետ օգտագործում</u>**: Առանձնակի կարևորվելու է գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես հողային ռեսուրսների, նպատակային և արդյունավետ օգտագործումը, ցանքատարածությունների ավելացումը:
- **<u>Պարենային անվտանգություն</u>**: Առաջնահերթ խնդիր է մնում երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը:
- **<u>Տնտեսավարման ձևերի կատարելագործում</u>**: Առաջիկա խնդիրների մեջ առանձնանում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով՝ արտադրության արդյունավետության բարձրացումը:

- **<u>Սերմնաբուծության զարգացում</u>**: Առաջնահերթ խնդիրներից է լինելու գյուղատնտեսական մշակաբույսերի, հատկապես հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, վերջինիս արդյունքում՝ բարձրորակ սերմերով հանրապետության ապահովվածության մակարդակի բարձրացումը:
- **<u>Անասնաբուծության տոհմային գործի զարգացում</u>**: Առաջնահերթ է համարվում անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև անասնաբուժական համակարգի կատարելագործումը:
- **<u>Ջրային ռեսուրսների խնայողական օգտագործում</u>**: Լուրջ խնդիրներից է Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի խնայողաբար օգտագործումը, որին կնպաստի ձկնաբուծությունում կիսափակ տեխնոլոգիայի ներդրումը:
- **<u>Ապահովագրական համակարգի աստիճանական ներդրում</u>**: Կարևորվում է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը:
- **<u>Բնական աղետների դեմ պայքար</u>**: Բնական աղետների, մասնավորապես կարկտահարության վնասների բացառման համար հրատապ է համարվում կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառման տեխնոլոգիաների ներդրումը:
- **<u>Սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավում</u>**: Երկրի պարենային հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության պահպանման, բուսաբուծական և անասնապահական ծագման արտադրատեսակների մրցունակության բարձրացման առումով շարունակվելու է սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավումը, մասնավորապես օրենսդրական հիմքերի կատարելագործումը, տեխնիկական բազայի ամրապնդումը և կադրերի ուսուցումը:

- **<u>Տեխնիկական միջոցներով համալրում</u>**: Առաջնահերթ են նաև գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի համալրման խնդիրները, որոնց լուծմանը կուղղվեն գյուղատնտեսությունը տեխնիկական միջոցներով ապահովելու տարբեր մատչելի մեխանիզմներ: Առանձնակի ուշադրություն կդարձվի հացահատիկահավաք կոմբայնների մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրմանը: 2013 թվականին Բելոռուսի Հանրապետության հետ բանակցությունների արդյունքում շուկայականից անհամեմատ ցածր գներով հանրապետություն են ներկրվել 120 միավոր ՄՏԶ-82.1 մակնիշի անիվավոր տրակտորներ, իրենց գյուղատնտեսական գործիքներով: Տեխնիկան կառավարության որոշմամբ իրացվել է ուղղակի վաճառքի և լիզինգի միջոցով: Նշվածից բացի, նախարարության համակարգմամբ գործող վարկային ծրագրի շրջանակներում 2012-2013թթ. հանրապետություն են ներկրվել 367 միավոր տրակտորներ և գյուղատնտեսական գործիքներ (որից 75 միավոր անիվավոր տրակտոր):